



Ռաֆֆի

Սուրբ ոսկերք

Անապատ, անշեն, դաշտ էր ընդհանուր,
Ուր թափառում եմ մտահոյզ, տխուր,
Ուր ավերակաց տրտում տեսարան
Բերե անախործ զգացմունք իմ վերան:

Աղամա որդվոց չեր լսվում աստ շունչ,
Այլ բուի ճշուն, աղվիսաց մոռնչ,
Միակ հիշատակ աստ հին մարդկության
Ներկայանում է ցուրտ դամբանարան:

Անգութ ժամանակ, կոռվն ծերունին,
Ստեղծագործության այդ հին թշնամին,
Մարդկանց մարմիններ փոշի դարձրել ողջ,
Մի կառափ միայն մնացել էր ամբողջ:

Անապատի մեջ, թեև դուզնաքյա,
Վաղամեռ մարդու այդ մնացորդը
Ինձ շատ գրավեց, վեր առա նորան,
Դրած նայում եմ, իմ ծնկի վերան:

Երանի՝ վերին գրոց սրբազան,
Լինեի դպիր, և տառը զանազան
Ես բացատրեի այդ լայն ճակատին,
Թե ո՞վ էր արդյոք մարդու այդ որդին:

Արդյո՞ք արքայի դա գլուխ թագագարդ,
Որ յուր գահույից մահվան սուր գեղարդ
Զարկեց, կործանեց, տարավ հողի տակ,
Կորավ նորա փառք, մարգարտյա պսակ:

Արդյո՞ք մի աղքատ, քրքրված մուրացիկ,
Որո կենաց թել սովո կտրեց ժանիք,
Եվ բարի մարդիկ նորա մեռած դին
Բերին թաղեցին մեջ այդ ցուրտ հողին:

Արդյո՞ք ծերունի մի սուրբ բարուն,
Քարոզող փրկչի կտակ և անուն,
Վարվարաց ձեռքից խմավ դառն բաժակ,
Հիսուսի սիրուն եղավ նահատակ:

Ասա՛, ո՞վ վերին գողտրիկ Օվարթուն,
Որ պահպանում ես այդ փթած աճյուն,
Ո՞ւմ կըպատկանի փշրած այդ կառափ,
Որ բերե գաղտնի ինձ վերա սարսափ:

Հանկարծ լսելի եղավ մի հնչյուն,
Որպես գեվյուոի հեզիկ շշնչյուն.
Եվ նորա միջից որոշ այդ ձայներ,
Ինձ զմայլանաց բերին հիացում:

«Դա էր քաջ Վարդանն՝ այն հայ տղամարդ,
Շավարշան դաշտում մարտնչեց յուր մարտ,
Կրոնի, հայրենյաց և ազգի համար
Նա թափեց արյուն, եղավ զոհ արդար:

Դա սպարապետ էր Հայոց զորքին,
Սիրող հայրենյաց, սիրող յուր ազգին,
Որ մինչև կենաց յուր վերջին վայրկյան
Եղավ յուր ազգին շահավետ անդամ:

Աներևույթ ձայն ազդեց իմ սրտին,
Ես սուրբ նշխարքը դրեցի գետին.
Եվ նորա առջև ծունկ իշա շուտով,
Երկրպագեցի երկյուղած սրտով:

Ինձ տիրեց սարսափ: Կոչեմ սաստկագին.
Դա ազգասերի գլուխ է անգին,
Դա մեր հերոսի գանգն է քաջազեն,
Որ փրկեց կրոն զենտի կրակեն:

Քեզ, ո՞վ սուրբ ոսկերք, ես պիտի պաշտեմ,
Ոսկի, արծաթի սափորում կամփոփեմ,
Կըշինեմ մատուո, տաճար, սուրբ սեղան,
Կըկանգնեմ քեզի մի անմահ արձան:

Առավոտյան շուտ ես քո առջևու,
Եվ երեկոյան ծնկներու վերա,
Կըլամ, կըվերուղեմ աղոթք ջերմաշերմ,
Դու իմ բարեխոս, ես քեզ կաղերսեմ:

Երբ որ դավ դնե անզութ թշնամին,
Եվ պատժել պետք էր այն անզգամին,
Ես կըովի դաշտում, սուրբ իմ ձեռքում,
Կըխնդրեմ միայն քեզնից օգնություն:

Ծովի միջումն, երբ տանջե մրրիկ,
Ինձ տակով անեն լեռնացյալ ալիք,
Երբ կըսպառնա ինձ մահ և սարսափ
Անապատի մեջ մի Բետով-արաք.

Ամեն տեղ, ամեն փորձանքում
Քո անուն կըհիշեմ, քեզնից օգնություն,
Քեզնից փրկություն ես միշտ կըխնդրեմ,
Դու ես մեր Փրկիչ, ես քեզ կը պաշտեմ: